ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 149

ք. Երևան 18.11.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-7/3» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ, մեկ չափաբաժին), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև Նարեկ Սադյան Ա/Ձ-ն /ՀՎՀՀ՝ 43228518, գործունեության հասցե՝ ՀՀ, Կոտայք, Քասախ, Գ. Նժդեհ 3,40 (այսուհետ՝ Մասնակից)/:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակցի հայտը գնահատվել է բավարար և Ընթացակարգում հայտարարվել է ընտրված մասնակից: Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ էլեկտրոնային գնումների www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի և որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Նարեկ Սադյան Ա/Ձ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ գնահատող հանձնաժողովի 18.10.2024թ.-ի որոշմամբ վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հաշվի առնելով, որ Նարեկ Սադյան Ա/Ձ-ն, որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը, որոշում եմ՝

Նարեկ Սադյան Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ